ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 387 - Ա

23 օգոստոսի 2016 թ.

«ԵՐԱՆՈՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը՝

որոշում եմ՝

1. Հաստատել 2016 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 11^{00}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Երանոսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ Նիկոյան Արտաշես (մարզպետի տեղակալ), Պողոսյան Անուշ (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ), Ղուկասյան Վերգինե (մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ), Խաչատրյան Հայկ (մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար), Խաչատրյան Վիգեն (մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արտաշես Նիկոյանին, քարտուղար՝ Նելսոն Սարգսյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ